<u>Հունվար-2023, հունվարի 16-20</u>

1.Միքայելը թիվը բաժանում է 5-ի և 9-ի, այնուհետև ստացված մնացորդները բազմապատկում: Նշվածներից ո՞ր թիվը նա կարող է ստանալ:
1) 25 2) 27 3) 30 4) 32

2. Ուղղաթիռը 1 վայրկյանում անցնում է 45 մ: Ինչքա՞ն ժամանակում այդ ուղղաթիռը կանցնի 270 կմ:
1) 1 ժամ 40 րոպե
2) 1 ժամ 20 րոպե
3) 1 ժամ 30 րոպե
4) այլ պատասխան

3.Պահակը մեկ օր աշխատում է, հաջորդ երկու օրը հանգստանում: Առաջին անգամ երբ նա գնաց աշխատանքի երկուշաբթի էր: Շաբաթվա ի՞նչ օր էր, պահակի 25-րդ աշխատանքային օրը: Շաբաթ, կիրակի օրերը համարել ոչ աշխատանքային:
1) երկուշաբթի
2) երեքշաբթի
3) չորեքշաբթի
4) հինգշաբթի

4.Ուղղի վրա նշված են մի քանի կետեր: Ուղղի վրա առաջացած այն հատվածների քանակը, որոնց ծայրակետերը նշված կետերն են, 30-ից շատ են, 40-ից՝ քիչ: Քանի՞ կետ է նշված ուղղի վրա:
1) 7
2) 8
3) 9
4) 10

5.Անին որոշեց ծննդյան օրը իր բոլոր 32 համադասարանցիներին կոնֆետ հյուրասիրել: Նա հաշվեց, որ եթե աղջիկներից յուրաքանչյուրին տա 4 կոնֆետ, իսկ տղաներից յուրաքանչյուրին՝ 3 կոնֆետ, ապա պետք է գնի 115 կոնֆետ: Քանի՞ աղջիկ է սովորում այդ դասարանում:

1) 17
2) 18
3) 19
4) 20

6.Տասը ափսեում մրգեր են դրված: Ցանկացած երկու ափսեում եղած մրգերի քանակը 6-ից շատ է: Ամենաքիչը քանի՞ միրգ կարող է լինել բոլոր ափսեներում միասին:

1) 37
2) 38
3) 39
4) 40

7.Բաժանելին 7 անգամ մեծ է բաժանարարից, իսկ քանորդը 7 անգամ փոքր է բաժանարարից: Ինչի՞ կարող է հավասար լինել բաժանելին:

1) 7
2) 49
3) այլ պատասխան
4) 1

8. Ինչի՞ է հավասար 9 ∗ 8 ∗ 4 հնգանիշ թվի ∗-երի փոխարեն գրված թվանշանների գումարի ամենամեծ արժեքը, որոնց դեպքում տրված հնգանիշ թիվը կբաժանվի 36-ի:

1) 15
2) 12
3) 27
4) 14

9.Գտնել այն եռանիշ թվերի քանակը, որոնց թվանշանների արտադրյալը հավասար է 24-ի:

1) 24

2) 21

3) 12

4) 6

10. 1 համարիչով 3 իրարից տարբեր սովորական կոտորակների գումարը 1 է: Գտնել նրանցից ամենափոքրի հայտարարը:

1) 3

2) 6

3) 5

4) 12

11. 203 թիվը ներկայացրել են մի քանի բնական թվերի գումարի տեսքով այնպես, որ գումարելիների արտադրյալը ևս լինի 203: Քանի՞ գումարելի ունի 203 թվի այդպիսի ներկայացումը:

1) 169

2) 167

3) 203

4) 202

12. Հայտնի է, որ Արամի և Արմենի տարիքների գումարին, եթե ավելացնենք նրանց տարիքների արտադրյալը, կստանանք 34: Որքա՞ն է նրանցից ավագի տարիքը:

1) 8

2) 7

3) այլ պատասխան

4) 6

13. Նկարում պատկերված 3x3 չափսերի քառակուսու 9 վանդակներում 1; 3; 5; 12; 14; 16; 23; 25; 27 թվերը դասավորված են այնպես, որ բոլոր տողերում, սյունյակներում և անկյունագծերում գտնվող երեքական թվերի գումարները լինեն հավասար: Գտնել այդ գումարի արժեքը:



1) 40
2) 41
3) 42
4) 43

14. 1000-ը ներկայացրել են միմյանց հաջորդող 16 բնական թվերի գումարի տեսքով: Գտնել այդ գումարելիներից փոքրագույնի արժեքը:
1) 55
2) 54
3) 53
4) 52